ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
«ՆՈՐԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ
ՏՆՕՐԵՆԻ

գ.Նորապատ 9փ.38շ,

norapatimankapartez@mail.ru

27.փետրվար .2024թ.

Թիվ 0-013

«ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
/ ՀՀ, ք. Երևան, Այգեստան 9փ, 25/1 տ, հեռ.՝ +37455066668/

Հարգելի պարոն Գրիգորյան

«Նորապատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար 2023 թվականի դեկտեմբերի 14-ին հայտարարված սննդամթերքի ձեռքբերման ՀՀԱՄՄՀ ՆԳՄ-ԳՀԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 4-րդ, 5-րդ, 6-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ, 22-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 37-րդ, 42-րդ, 43-րդ չափաբաժինների մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 02855732, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Այգեստան 9փ., 25/1 տ, հեռ.՝ +37455066668, էլեկտրոնային հասցե՝ edita-jan@mail.ru), որի հետ 06.02.2024թ-ին կնքվել է ՀՀԱՄՄՀ ՆԳՄ-ԳՀԱՊՁԲ-24/1-3 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

«Նորապատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից՝ պայմանագրով սահմանված կարգով, զանգով, պարբերաբար առաջարկվել է ապահովել ապրանքների պատշաճ մատակարարումը՝ մասնավորապես կատարել պայմանագրով սահմանված

պարտավորությունները, սակայն «ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս» ՍՊԸ-ն պատվիրատուի կողմից նշված ժամկետներում և քանակություններով չի ապահովել ապրանքների մատակարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ «Նորապատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումն ունի կենսական նշանակություն, իսկ մատակարարումների նման ժամանակավրեպ, ինչպես նաև ոչ պատշաճ իրականացումը կարող է խաթարել կազմակերպության գործունեության բնականոն ընթացքը, «ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ՀՀԱՄՄՀ ՆԳՄ-ԳՀԱՊՁԲ-24/1-3 ծածկագրով պայմանագիրը 4-րդ, 5-րդ, 6-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ, 22-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 37-րդ, 42-րդ, 43-րդ չափաբաժինների մասով միակողմանի մասնակի լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. մարտի 11-ը ներառյալ, ապահովել 4-րդ, 5-րդ, 6-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ, 22-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 37-րդ, 42-րդ, 43-րդ չափաբաժինների մասով ներկայացված տուժանքների, մասնավորապես՝ որակավորման ապահովման մասով՝ 437,260.50 (չորս հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր վաթսուն և հիսուն լումա) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 291,507.00 (երկու հարյուր իննսունմեկ հազար հինգ հարյուր յոթ) ՀՀ դրամի չափով, վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ «Նորապատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ « Յունիբանկ» ԲԲԸ -ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում կազմակերպությունը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝
«ՆՈՐԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԵՏՐՈՍ ԲԱԴԱԼՅԱՆ